Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Իշխանասարի հիմնական

Թեմա՝ Ինչպես արդյունավետ դաս պլանավորել

Վերապատրաստող-մենթոր՝ Արմինե Մեծրիցյան

Ուսուցիչ՝ Մերի Մակարյան

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն ----------3

Գլուխ 1 Ի՞նչ է պլանավորորումը----------4

Գլուխ 2 Ինչու՞ է անհրաժեշտ պլանավորումը----------7

Գլուխ 3. Դասը ճիշտ պլանավորելու բաղադրիչները----------8

Գլուխ 4. Ուղիղ հրահանգումով դասավանդում----------14

Եզրակացություն ----------16

Գրականության ցանկ----------17

Ներածություն

Աշխատանքի սկզբից մինչև նրա վերջնարդյունքը մտքում պահել՝ նշանակում է գործը նախաձեռնել նպատակի հստակ պատկերացմամբ և իմանալ, թե դեպի ուր ես գնում: Այդ դեպքում առավել հստակ ես պատկերացնում՝ որտեղ ես այս պահին և քայեր ես ձեռնարկում միայն ճիշտ ուղղությամբ:

Սթիվն Քովի

Դասավանդման ժամանակակից մեթոդիկայում կան դասի պլանավորման տարբեր եղանակներ և մոտեցումներ, որոնք նպատակ ունեն առավել արդյունավետ ու որակյալ դարձնելու դասավանդումը, ապահովելու առարկայական չափորոշիչներով և ծրագրային պահանջներով պլանավորած արդյունքները:

Պլանավորումը հնարավորություն է տալիս ավելի նպատակային կազմակերպելու ուսումնական գործընթացը, համապիտանի ուսումնական գործողությունների միջոցով ապահովելու առարկայական, միջառարկայական և վերառարկայական կարողությունների ձևավորումը: Պլանավորումը հնարավորություն է տալիս ուսուցչի և աշակերտների միջև համագործակցային հարաբերությունների ձևավորմանը: Ուսումնական գործընթացի մասնակիցները հնարավորություն են ունենում պլանավորում իրականացնելիս գծագրել յուրահատուկ նախագծային աշխատանք, ինչը աշակերտին դրդում է հետազոտական աշխատանքի:

Պլանավորած դաս իրականացնելու առավելություններից մեկն այն է, որ պլանավորված դասապրոցեսի ընթացքում պահպանվում են դասի կառուցվածքային փուլերը:Այս դեպքում ուսուցիչը հստակ գիտի դասի կառուցվածքային տարբեր փուլերում ինչ մեթոդներ է կիրառելու, որպեսզի լուծի իր առջև դրված նպատակները:

Այսպիսով, եթե ուզում ենք բարձրացնել ուսուցման հանդեպ հետաքրքրվածությունը, աշակերտների ներգրավվածությունը և կրթության

որակը, ապա պետք է անպայմանորեն իրականացնել յուրաքանչյուր դասի պլանավորում:

Ուսուցիչների համար շատ հաճախ դասի պլանավորում իրականացնելը առաջ է բերում որոշակի դժվարություններ:Մասնավորապես դասի պլանավորումը դժվարություններ է առաջացնում այն ուսուցիչների մոտ, ովքեր աշխատում են ծանրաբեռնված:Իրականում յուրաքանչյուր օրվա կտրվածքով յոթ դասաժամի պլանավորումը ուսուցիչների մոտ առաջացնում է դժգոհություն, սակայն հարկ է գիտակցել և ընդունել, որ առանց պլանավորման իրականացրած դասը չի կարող լինել արդյունավետ, ուստի առաջարկում ենք օրվա դասի պլանավորման մի քանի եղանակներ, որոնք կարելի է կիրառել նույնիսկ սեղմ տարբերակներով:Հետազոտական աշխատանքի ուսումնասիրության նպատակը պլանավորման ժամանակ ուսուցիչների առջև ծառացած խնդիրների լուծումն է:Այս աշխատանքի մեջ կանդրադառնանք հետևյալ կարևոր խնդիրներին.

- Ի՞նչ է պլանավորումը
- Ինչու՞ է անհրաժեշտ դասի պլանավորումը
- Որո՞նք են ճիշտ պլանավորում իրականացնելու նախադրյալները:
- Ուղիղ հրահանգումով դասավանդում:

Այսպիսով՝ հետազոտական աշխատանքի հիմնական նպատակներն են համակարգել պլանավորման մասին եղած նյութերն ու տարբերակները,բարելավել պլանավորման բաղադրիչների մասին արդեն իսկ ունեցած գիտելիքները,ապացուցել այն պնդումը, որ նախապես պլանավորված դասը ավելի որակյալ է և արդյունավետ:

Գլուխ 1. Ի՞նչ է պլանավորումը

Պլանավորումը ժամանակի և տարածության մեջ դրված նպատակների իրագործումն է՝ համապատասխան մեթոդների և ռազմավարության կիրառմամբ։
Պլանավորումը կարող է վերաբերել կյանքի ցանկացած ոլորտի, քանի որ ցանկացած աշխատանք արդյունավետ է, եթե այն իրականացվում է նախապես կազմված պլաններով և մշակված ռազմավարությամբ։
Պլանավորումը վարչական գործառույթ է, որը ներառում է իրավիճակի վերլուծություն, նպատակների սահմանում, նշված նպատակներին հասնելու ռազմավարությունների ձևակերպում և գործողությունների պլանների մշակում, որոնք ցույց են տալիս, թե ինչպես իրականացնել այդ ռազմավարությունները։
Նվազագույն բաղադրիչները, որոնք ուսուցիչը պետք է հաշվի առնի ուսուցման պլանավորման ժամանակ, հետևյալն են՝ նվաճումների ցուցանիշները, ակնկալվող ուսումնառությունը կամ բովանդակությունը, ընթացակարգերը (գործունեությունները), ռեսուրսները և գնահատման գործողությունները՝ անկախ օգտագործվող ձևաչափից ։
Կրթության պլանավորումը պատասխանատու է կրթության, խնդիրների և նպատակների հստակեցման համար։ Այս տեսակի պլանավորման շնորհիվ հնարավոր է սահմանել, թե ինչ անել, ինչ ռեսուրսներով և ռազմավարություններով։Կրթական պլանավորումը ենթադրում է տարբեր հարթությունների փոխազդեցություն։
Ուսումնական հաստատության արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ է իրականցնել պլանավորում ուսումնական հաստատությունում կատարվող ցանկացած աշխատանքի համար։ Ուսումնական հաստատությունը որպես կառույց իրար ամուր թելերով և օղակներով կապակցված է, և արդյունավետ և որակյալ աշխատանքը կախված է մեխանիզմի յուրաքանչյուր մասնիկի արդյունավետ աշխատանքից։Ուստի յուրաքանչյուր օղակի աշխատանքի համար անհրաժեշտ է ընտրել աշխատանքների հստակ ռազմավարություն, հստակ նպատակներ և այդ նպատակներին հասնելու ուղիներ և եղանակներ։

Պլանավորման տարբեր դասակարգումներ կան։Անդրադառնանք պլանավորման տեսակներին.

Ժամանակային կամ ժամկետային պլանավորումը գործունեության իրականացման այնպիսի ռազմավարության մշակում է, որը ենթադրում է սահմանված նպատակների իրագործում հստակ նախանշված ժամկետում։ Ըստ իրագործման ընթացքի՝ առանձնացնում ենք ժամկետային պլանավորման հետևյալ տեսակները։

- Կարճաժամկետ պլանավորում. պլանավորման տեսակ է, որի ժամանակ սահմանված նպատակներն իրագործվում են մեկ տարվա ընթացքում։
- Միջնաժամկետ պլանավորումը պլանավորման տեսակ է , որի ժամանակ սահմանված նպատակներն իրագործվում են մինչև հինգ տարի ժամկետը։
- Երկարաժամկետ պլանավորում. պլանավորման տեսակ է, որի դեպքում սահմանված նպատակները բովանդակային առումով ընդգրկուն են, և դրանց իրականացման համար անհրաժեշտ է երկար ժամանակ՝ հինգ տարուց ավել։

Պլանավորման մեջ առանձնացնում են նաև հետևյալ տեսակները։

- ռազմավարական պլանավորում
- թեմատիկ պլանավորում
- օպերատիվ պլանավորում։

Գլուխ 2. Ինչու՞ է անհրաժեշտ դասի պլանավորումը

Դասը մանկավարժական գործընթացի բջիջն է: Մանկավարժության նշանակալի մասը խտանում է դասի մեջ: Այն սովորողների կրթության, զարգացման և դաստիարակության խնդիրների լուծման համար պարբերաբար կիրառվող գործընթաց է, որոշակի ժամանակահատվածում ուսուցիչների հաստատուն կազմի և սովորողների գործունեության կազմակերպման ձև: Դասը միևնույն տարիքային խմբի կրթության կազմակերպման ձև է՝ կոնկրետ օրակարգով և բոլորի համար միասնական կրթական ծրագրով: Այդ ձևում ներդրված են կրթական-դաստիարակչական գործընթացի բոլոր բաղադրիչները՝ նպատակ, բովանդակություն, միջոցներ, մեթոդներ, կազմակերպման և ղեկավարման գործունեություն և դրանից բխող դիդակտիկ տարրեր: Յուրաքանչյուր դաս սկսվում է վերջնական նպատակի գիտակցումով և դրա ճշգրիտ, կոնկրետ սահմանումով, այնուհետև՝ նպատակին հասնելու միջոցների հաստատմամբ և վերջապես՝ նպատակին հասնելու մեթոդների սահմանմամբ:

Ուսուցչի և աշակերտի ուսումնական գործունեությունը հիմնականում կենտրոնանում է դասի վրա:Դրա համար էլ մեծ մասամբ աշակերտների պատրաստվածությունը այս կամ այն առարկայից որոշվում է դասի անցկացման մակարդակով:Որպեսզի այդ մակարդակը լինի բավարար չափով բարձր, անհրաժեշտ է,որ ուսուցիչը դասին նախապատրաստվելիս աշխատի այն պլանավորել իբրև իր հարուստ մտահաղացումներով մի ինքնատիպ ստեղծագործություն՝ յուրահատուկ նախաբանով, հանգույցով և լուծումներով:Շատ կարևոր է գիտակցել, որ ուսուցումը ուսուցչին աշակերտի համատեղ գործունեություն է՝ հիմնված համագործակցության և փոխընբռման սկզբունքների վրա:

Եթե ուսուցչի կողմից իրականացվող դասերը ինքնանպատակ չեն, միտված են տարբեր խնդիրների լուծմանն ու նպատակների իրագործմանը, ուրեմն անպայմանորեն պետք է յուրաքանչյուր դասի համար կատարված լինի պլանավորում: Դասի պլանավորումը ուսուցչի համար կարող է դառնալ հաջորդական քայլերի ուղեցույց, որը հնարավորություն է տալիս նախագծված ճանապարհից չշեղվել: Դասի պլանավորման մեջ ուսուցիչը նշում է գործողությունների հաջորդական ընթացքը՝ համապատասխանաբար կատարելով ժամանակի բաշխում, ինչն էլ հնարավորություն է տալիս հնարավորինս օպտիմալ

օգտագործել դասի յուրաքանչյուր բոպեն: Առանց պլանի դասաժամի արդյունավետությունը միանգամայն նկատելի է, քանի որ ուսուցիչը, ինչքան էլ փորձառու լինի, տվյալ դասի ընթացքում չի կարողանում ընտրել դասի նպատակներից բխող մեթոդների կիրառություն: Փորձելով ընդհանրացնել՝ կարող ենք նշել, որ ժամանակակից կրթական մոտեցումներին ու պահանջներին համապատասխան դաս վարելու համար դասի նախապես պլանավորումը պարտադիր է:Աշակերտակենտրոն ուսուցման կենտրոնը աշակերտն է, ով ինքնըստինքյան դառնում է ուսումնասիրող, հետազոտող, նախագծող, ուստի ժամանակակից դասը պիտի լինի այնքան հագեցած ու բովանդակալից, որ կարողանա գրավել ժամանակակից աշակերտների հետաքրքրությունների շրջանակը: Իսկ այս չափանիշները պահպանելու համար ուսուցչից պահանջվում է ստեղծարարություն և մեծ ջանք ու եռանդ: Ինչքան ստեղծարար ու նախաձեռնող է ուսուցիչը, այնքան հաջողված ու ստացված է դասը, գոհ և մոտիվացված է աշակերտը, իրագործված են դասի համար սահմանված նպատակները:

Բացի դասի արդյունավետությունից, օրվա դասի պլանը կարևոր է նաև տնօրինության իրականացրած վերահսկողության համար, քանի որ դասապլանների պարբերական ստուգումը հնարավորություն է տալիս հասկանալ կապը հանրակրթության չափորոշչի, առարկայական ծրագրերի հետ: Յուրաքանչյուր օրվա դասի պլանավորումը փաստում է նաև առարկայական թեմատիկ պլանավորման հետ կապը, ինչը ներկայումս վերահսկողության կարևորագույն կետերից մեկն է:

Սակայն, չնայած վերոնշյալ դրական կողմերին, դասի պլանավորումը մեծ դժգոհություն է առաջացնում ուսուցիչների շրջանում: Պատճառը ժամանակի սղությունն է և ուսուցիչների ծանրաբեռնված աշխատանքը, քանի որ դասի պլանավորման համար ուսուցիչը հատկացնում է բավականաչափ ժամանակ, իսկ եթե անհրաժեշտ է դասը համեմել ՏՀՏ գործիքներով, ժամանակի քանակը կրկնապատկվում, նույնիսկ եռապատկվում է: Ուստի այս աշխատանքի մեջ կփորձենք անդրադառնալ բոլոր այն բաղադրիչներին, որոնք ուսուցիչներին հնարավորություն կտան կարճ ժամնակամիջոցում և սեղմ տարբերակներով պլանավորել իրենց օրվա դասերը:

Գլուխ 3. Դասը ճիշտ պլանավորելու բաղադրիչները

Ուսուցչի աշխատանքի մանրամասն պլանավորումը հնարավորություն կտա ավելի նպատակային կազմակերպել ուսումնական գործընթացը, համապիտանի ուսումնական գործողությունների միջոցով ապահովել առարկայական, միջառարկայական կարողությունների ձևավորումը։Դասի պլանավորումը պայմանավորված է որոշակի չափանիշներով։Այդ չափանիշները դասի փուլերն են,դրանց նպատակները, ուսումնական նյութերի բովանդակությունը, աշակերտների ուսումնական գործունեության կազմակերպման մեթոդներն ու հնարները։Ավանդական դասապլաններում հիմնականում նկարագրվում է դասի բովանդակային կողմը, որը հնարավորություն չի տալիս վերլուծություն կատարել։

Դասի վերլուծության ժամանակ ուսուցիչը հաճախ վերարտադրում է դասի ընթացքը՝ դժվարանալով հիմնավորել ընտրված բովանդակության,օգտագործված մեթոդներն ու ուսուցման կազմակերպական ձևերը։Պլանավորումը հնարավորություն է ընձեռում յուրաքանչյուր ուսուցչի մանրամասն պատկերացնել իրականացվելիք աշխատանքը, թույլ է տալիս գնահատել դասի համար ընտրված մեթոդների հնարավորությունները։

Ուսուցչի խնդիրն է՝ ճիշտ շերտավորել կատարվող աշխատանքները և առաջընթացն ապահովել տարբեր կարողունակություններունեցող երեխաների համար։Դասի պլանավորումը նպաստում է ուսուցման որակի բարձրացմանը, քանի որ այն նախագծվում է նպատակից մինչև արդյունք, օգտագործվում են տարբեր մեթոդներ, հստակ ընդգծվում է տարբեր փուլերի առկայությունը, նյութի շերտավորումը տարբեր փուլերի ընթացքում։

Դասի ճիշտ պլանավորման կարևոր բաղադրիչներից մեկը դասի կառուցվածքի ընտրությունն է։ Դասի կառուցվածքը ուսումնառության ընթացքում առաջացած և ուսումնական գործընթացի նպատակային առաջընթացն ապահովող տարրերի փոխազդեցությունների հանրագումարն է։ Ըստ կառուցվածքի կարող ենք առանձնացնել հետևյալ դասերի տիպերը.

- նոր նյութի հաղորդման դաս
- գիտելիքների, կարողությունների, հմտությունների զարգացման և ամրապնդման դաս
- կարողությունների և հմտությունների ձևավորման դաս
- կրկնողության դաս

- ստուգողական կամ սխալների ուղղման դաս
- համակցված դաս:

Դասի կառուցվածքին համապատասխան փոփոխվում են դասի նպատակները, իսկ նպատակների իրագործումը մեկ դասի ընթացքում մեծապես կախված էուսուցչիվարպետությունից, մեթոդների ընտրությունից, ուստի դասի պլանավորման ժամանակ անպայմանորեն հաշվի ենք առնում մեր դասի կառուցվածքը, որի ընտրությունից հետո առանձին-առանձին անդրադարձ ենք կատարում կառուցվածքային փուլերից յուրաքանչյուրին:

Նպատակն այն կետն է, որին ուսուցիչը պետք է հասնի իր գործունեության միջոցով, այսինքն՝ նպատակը պատասխանում է <<ի՞նչ եմ ես ուզում>> հարցին: Դասի նպատակը կարող է լինել կրթական, դաստիարակչական և զարգացնող: Նպատակների ձևակերպումը ևս շատ հաճախ հանգեցնում են որոշակի դժվարությունների: Ստորև ներկայացնում ենք մի քանի խնդիրներ, որոնց հանդիպում ենք նպատակներ սահմանելիս.

- Լոկալ նպատակների սահմանում

Նպատակները կարող են լինել գլոբալ և լոկալ: Գլոբալ նպատակները առավել լայն և ընդգրկուն հասկացություններ են, որոնց, որպես կանոն, չի կարելի հասնել մեկ դասաժամի ընթացքում: Դրանք մեծ նպատակներ են, որոնք ամրագրված են ՀՀ կրթության մասին օրենքում և չափորոշիչներում, այնպիսի նպատակներ են, որոնք հանդիսանում են մարդկային գործունեության ուղենիշներ: Սրանց հակառակ՝ լոկալ նպատակները առավել փոքր նպատակներ են, և ճիշտ աշխատանքի դեպքում կարող են իրագործվել մեկ դասի ընթացքում: Դասի նպատակները սահմանելիս կարող ենք ընտրել մի քանի լոկալ նպատակներ, որոնք կարող ենք իրագործել մեկ դասաժամի ընթացքում:

- Սահմանված նպատակները պետք է լինեն հստակ և որոշակի: Եթե նպատակները հստակ են, բացատրվում են աշակերտին, ընդգծվում են սահմանված նպատակների արդիականությունն ու անհրաժեշտությունը, ապա դրանք կարևորվում են աշակերտների կողմից:
- Ի սկզբանե դասի համար դրված նպատակները դասի ընթացքում պետք է լինեն հաստատուն, չենթարկվեն փոփոխությունների:Շատ հաճախ աշակերտները ակտիվորեն ներգրավված են լինում ուսումնական գործընթացին , մասնակցում են տարբեր առաջադրանքների իրականացմանը, սակայն վերջում դժվարանում են

եզրահանգումներ կատարել, թե որն է իրենց կատարած աշխատանքի նպատակը։ Սա նշանակում է, որ տարվելով ուսումնական գործընթացով՝ ուսուցիչը հեռացել է իր սահմանած նպատակներից, և դասի ավարտին նպատակները մնացել են չիրականացված։

- Նպատակները երբեն- երբեմն, իհարկե, կախված դասարանից, կարող են սահմանել հենց աշակերտները։ Որպես կանոն՝ նպատակների՝ իրենց կողմից առաջադրված լինելու փաստը մոտիվացնում է աշակերտներին, և նրանք հետաքրքրվածություն են ցուցաբերում դասի ամբողջ ընթացքի նկատմամբ՝ փորձելով հասկանալ՝ արդյոք կարողացան իրագործվել իրենց սահմանած նպատակները։
- նպատակները պետք է չունենան աղոտ եզրագծեր։ Այդ իսկ պատճառով պետք է խուսափենք ոչ չափելի բառերի կիրառումից։ Այս հարցում ուսուցիչներին օգնության է հասնում Բլում- Անդերսոն տաքսոնոմիան՝ ցածր կարգի և բարձր կարգի մտածողության բայերով։

Ստորև ներկայացնում ենք Բլում-Անդերսոն տաքսոնոմիան, որը նպատակահարմար է կիրառել դասի նպատակները սահմանելու համար։

Նպատակները պետք է բավարար լարվածություն ունենան, հասանելի լինեն, աշակերտների կողմից ընկալելի լինեն, առաջընթացային և ճկուն լինեն, այսինքն արձագանքեն պայմանների փոփոխությանը և նպատակին հասնելու

հնարավորություններին: Սակայն նույնիսկ նպատակների ամենակատարյալ համակարգը նվազ արդյունավետություն կունենա, եթե ուսուցիչն այդ նպատակներին աշակերտների գործողությունների միջոցով հասնելու ճանապարհների վերաբերյալ ճշմարիտ պատկերացումներ չունենա: Ուսուցիչը և աշակերտը հանդիսանում են նպատակի իրականացման սուբյեկտներ և այդ սուբյեկտների գործունեությունների համաձայնեցումը հանդիսանումէ մանկավարժական հմտության չափանիշներից մեկը: Արդի մանկավարժությունը պահանջում է նպատակների հստակ ձևակերպում և կատարման պարզություն: Դրա համար անհրաժեշտ է աշակերտներին սովորեցնել գլխավորն առանձնացնելը, այսինքն՝ ուսուցման նպատակներն ընտրելը:

Դասի ճիշտ պլանավորման և իրագործման հաջորդ կարևոր բաղադրիչը սահմանված նպատակներին համապատասխան մեթոդների ընտրությունն է:

Մեթոդների ընտրությունն իրականացվում է ժամանակակից կրթական մոտեցումների թելադրած պահանջներից: Ներկայումս ավանդական ուսուցչակենտրոն ուսուցման գործընթացին փոխարինելու է գալիս աշակերտակենտրոն ուսուցումը: Այս մոտեցումների փոփոխությունների հետ կապված էլ կարող ենք առանձնացնել համապատասխանաբար պասիվ և ակտիվ կամ փոխներգործուն մեթոդներ: Պասիվ մեթոդների մեջ մտնում են դասախոսությունը, ընթերցանութոյւնը, հարցումը: Ակտիվ ուսուցման մեթոդների շարքը օրեցօր ընդլայնվում է:Մեթոդների ընտրության հարցում ուսուցիչն ազատ է , կարևորը մեթոդի՝ դասի կառուցվածքային տվյալ փուլին համապատասխանելն է:Մանկավարժությունը պահանջում է ստեղծագործական մոտեցում, ուսուցիչները շատ հաճախ ստեղծում և կիրառում են մեթոդներ, որոնք ժամանակի ընթացքում տարածվում են և համընդհանուր կիրառում ստանում: Սա էլ հենց հիմնական պատճառն է, որ փոխներգործուն մեթոդները լայն տարածում են գտնում և մեծ թիվ են կազմում:

Դասի հաջողության և արդյունավետության հիմնական գրավականը աշակերտների ներգրավվածությունն է, ինչն ապահովում է խայծը: Եթե աշակերտները հետաքրքրություն են ցուցաբերում դասի վերաբերյալ , ապա դասն անցնում է արդյունավետ, ուստի անհրաժեշտ է գրավել աշակերտների ուշադրությունը, հետաքրքրությունը, ապահովել մասնակցությունը: Դասը կարելի է սկսել թեմայի հետ կապված որևէ անսովոր մասի մեջբերմամբ, տալ զարմանալի

և հետաքրքրական վիճակագրական տվյալներ, ցույց տալ ուշագրավ պատկեր, կիրառել սադրիչ հարցեր։

Երբ սովորողները բավարար դրդապատճառ չեն ունենում և չեն կարողանում ատացած տեղեկությունները կապել կյանքի հետ, չեն տեսնում դրանց օգտակարությունը, ապա հաճախ հարց են տալիս, թե իրենց ինչին է պետք տվյալ ինֆորմացիային տիրապետելը։ Այդ պարագայում կարևոր է սովորողին բացատրելիենց սկզբից , թե իր ինչին է պետք այս կամ այն գիտելիքը։ Այս դեպքում մենք կունեանք մոտիվացված աշակերտներ։

Դասի ամենօրյա պլանավորումը դասի արդյունավետության հետ կապված մտահաղացումների արդյունավետ իրագործման հրամայականն է։ Դասի պլանավորման բաղադրիչներն են՝

- Դասի թեման։
- Դասի նպատակները
- Դասի տեսակը
- Դասի հիմնական փուլերին հատկացվող ժամանակի բաշխում։
- Դասի ընթացքը։
- Դասի հենքային հասկացությունների ձևավորման փուլերը
- Դասավանդման մեթոդները

Դասի պլանը կազմելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ առանձին դասերի պլանավորված խնդիրները պետք է հանդիսանան ամբողջ ուսումնասիրվող նյութի ընդհանուր խնդրի բաղկացուցիչ մասը։ Դասի ընթացքում բացահայտված գիտելիքների բաղադրիչները պետք է ապահովեն այս կամ այն ամբողջական խնդրի լուծման որոշակի մասը։ Առանձին դասերի կոնկրետ խնդիրները պետք է դիտարկվեն մյուսների հետ փոխկապակցված։ Դասի պլանը կազմելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ մտավոր գործունեության ակտիվությունը նյութի հետ ծանոթացմանը համընթաց ավելանում է, եթե միաժամանակ աշակերտները կատարում են տվյալ նյութի յուրացմանը օժանդակող առաջադրանքներ, և պահպանվում են հետևյալ պայմանները՝

1) առաջադրված խնդիրը աշակերտներին մղում է որոշակի մտավոր հնարքի կիրառման,

2) աշակերտներն ունեն տվյալ առաջադրանքը կատարելու համար անհրաժեշտ գիտելիքներ և տվյալ հնարքի կիրառման հմտություններ

3) տվյալ հնարքը համապատասխանում է նյութի բովանդակությանը, և ինչքան շատ է համապատասխանում, այնքան ակտիվացնում է գործունեությունը։

Աշակերտների մտավոր գործունեությունը կարելի է ակտիվացնել նաև դիդակտիկ կանոնի կիրառման շնորհիվ, համաձայն որի ուսուցիչն սկզբից ձևակերպում է հստակ առաջադրանք, որը աշակերտները պետք է կատարեն նյութի ուսումնասիրման ընթացքում, դրանից հետո առաջարկում է աշակերտներին կարդալ գիրքը, լսել ուսուցչի կամ հարցման համար գրատախտակի մոտ կանչված աշակերտին։ Դասի համար առաջադրանք ընտրելիս կարևոր է հաշվի առնել, որ բոլոր աշակերտները պետք է ի զորու լինեն դրանք կատարել, այլապես աշակերտները կկորցնեն ինքնավստահությունը և կնվազի ուշադրությունը։ Բոլոր աշակերտները պետք է առաջադրանքի կատարման համար անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ունենան, հակառակ դեպքում ոչ բոլոր աշակերտները կմասնակցեն դասարանում կատարվող աշխատանքներին։ Բոլոր աշակերտները պետք է համոզված լինեն, որ կկարողանան կատարել առաջադրանքը։ Եթե դասավանդման մեթոդները համարենք ուսուցչի և աշակերտների փոխկապակցված գործունեության համակարգված միջոցներ, որոնք ուղղված են դասի նպատակին հասնելուն, ապա յուրաքանչյուր մեթոդի նկարագրությունը պետք է ներառի՝

1) ուսուցչի ուսուցողական գործունեության նկարագրությունը,

2)աշակերտի ուսումնական-ճանաչողական գործունեության նկարագրությունը,

3) վերը նշվածների միջև կապը կամ միջոցները, որոնցով ուսուցչի ուսուցողական գործունեությունը ուղղորդում է աշակերտի ճանաչողական գործունեությանը ։

Այսպիսի մոտեցումը պետք է իր անդրադարձն ունենա աշակերտի անձը կարևորող դասի պլանավորման վրա։

Այսպիսով, արդյունավետ և որակյալ դաս ունենալու համար յուրաքանչյուր ուսուցիչ պետք է կարողանա հստակ սահմանել իր օրվա դասի նպատակները, սահմանած նպատակներին անպայմանորեն անդրադարձ կատարել ինչպես դասի սկզբում, այնպես էլ դասի ավարտին։Պետք է կարողանա մեթոդների հսկայական պաշարից ընտրի այն մեթոդը, որի միջոցով կկարողանա առավել հեշտ ու դյուրին ճանապարհով հասնել իր սահմանած նպատակների իրագործմանը։

Գլուխ4 Ուղիղ հրահանգումով դասավանդում

Ուսուցման կազմակերպման մի շարք եղանակներ և տարբերակներ կան, որոնք ենթարկվում են տարբեր դասակարգումների։Այդ դասակարգումներից մոդելի համաձայն առանձնացվում է ուուցման երկու մոդել՝ուղղակի և անուղղակի։Այս աշխատանքում կանդրադառնանք ուղղակի ուսումնառությանը։ Ուղղակի ուսումնառության գլխավոր նպատակը երեխային սովորոցնելու անհրաժեշտությունն է։ Այս ուսումնառության մոդելը ունի երկու մասնակից՝ սովորեցնող և սովորող։ Գլխավոր դերը պատկանում է սովորողին, քանի որ սովորեցնողը ուսումնասիրում է սովորողների առջև ծառացած խնդիրները, իր առջև դնում է նպատակներ, մշակում ռազմավարական ծրագիր և սովորողների միջոցով հասնում է իր նպատակների իրագործմանը։ Ուղիղ հրահանգումով դասավանդումը լայն տարածում գտավ հատկապես այն պատճառով, որ այն հնարավորություն է տալիս համեմատաբար կարճ ժամանակահատվածում հասցնել մեծ խմբի հետ աշխատել։ Ուսումնառության այս մոդելի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տալիս ակադեմիական տարբեր մակարդակներ ունեցող խմբի տալ միևնույն ծավալի ինֆորմացիա։ Յուրաքանչյուր առարկայի հիմնական հասկացությունները, կանոններն ու օրենքները ներկայացվում են հստակ։ Նոր նյութը առաջարկվում է փոքր չափաբաժիններով, պարբերաբար ստուգվում է դրա յուրացումը, վերաբացատրվում են դժվար կետերը։

Ուղիղ հրահանգումով դասավանդման դեպքում դասն ունի յուրահատուկ կառուցվածք։ Դասը կազմված է իրար հետ սերտորեն կապված հինգ փուլերից՝ դասի սկիզբ, նոր նյութի հաղորդում, գործնական աշխատանք, ինքնուրույն աշխատանք, դասի ավարտ։

Դասի պլանավորման արդյունավետությունը կախված է դասի սկզբի հատվածից։ Դասի սկզբի համար նախատեսված խայծը պետք է լինի հետաքրքիր, որպեսզի կարողանա ներգրավել աշակերտներին։ Կան մի շարք մեթոդներ, որոնք նպատակահարմար է կիրառել դասի այս հատվածում։ Դրացից են՝<<մտագրոհ>>, <<գուշակություն>> , <<Արա՛ հիմա>>, <<Զարմանք, անսպասելիություն>>, <<Խորհրդավորություն>>։

Դասի հաջորդ հատվածը նոր նյութի հաղորդման հատվածն է։ Սա փաստացի դասապրոցեսի այն հատվածն է, երբ գործողությունն ։Նոր նյութի

հաղորդումըպետքէլինիհստակ, հատուկ ընտրված նյութին, համապատասխան չափաբաժնով: Այստեղ կարելի է համադրել ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդները: Նոր նյութը կարելի է ներկայացնել դասախոսություն մեթոդով՝ համեմելով ՏՀՏ գործիքների միջոցով պատրաստված սահիկաշարերով, տեսադասերով: Կարելի է նաև կիրառել <<Սատանայի հնարք>>, <<Կենտրոններով աշխատանք>>, <<Մտքերի հոսք>> և այլ մեթոդներ:

Հարկ է նշել, որ դասի ամեն հատվածում անհրաժեշտ է հարցերի կամ այլ մեթոդների միջոցով կատարել հաղորդված նյութի ընկալման ստուգում՝ ուշադրություն դարձնելով աշակերտների ներգրավվածությանն ու ակտիվությանը:

Ուղիղ հրահանգումով դասավանդման հաջորդ փուլը գործնական աշխատանքն է: Այստեղ նախորդ փուլին հատկանշական <<ես եմ անում>> դրույթին փոխարինելու է գալիս <<Մենք ենք անում>> դրույթը: Ուսուցիչը հստակ ձևակերպում է նոր նյութից բխող գործնական աշխատանքի իրականացման հրահանգները և իր վրա է վերցնում ուղղորդողի դերն ու պարտականությունը: Ակադեմիական գիտելիքներից զատ սովորողները զարգացնում են թիմային աշխատանքի կատարման համար անհրաժեշտ մի շարք հմտություններ:

Գործնական աշխատանքին հաջորդում է ինքնուրույն աշխատանքի փուլը: Ուսուցիչը դարձյալ հստակ հրահանգներ է տալիս հանձնարավող ինքնուրույն աշխատանքի վերաբերյալ: Սովորողներն ինքնուրույն աշխատանքի միջոցով ամրապնդում են նոր նյութը, որը ևս մեկ անգամ արդեն ամրապնդվել էր գործնական աշխատանքի փուլում: Այսպիսով բոլոր աշակերտներին հատկացվում է միևնույն ծավալի նյութ և աշխատանքի համար հավասար պայմաններ:

Դասն ավարտվում է դասի ամփոփմամբ, որը հետադարձ կապի ապահովման միջոց է հանդիսանում: Այս հատվածի համար կարելի է կիրառել այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են <<Ելքի քարտերը>>, <<Անավարտ նախադասությունները>>, <<Արագ պտույտը>>, <<Կպչուն հարցերը>> և այլն:

Դասիպլան 1

Թեմա՝<<Կլիմա: Կլիմաստեղծ գործոնները>>

1. ՈՒՍՈՒՑԻՉ՝ ՄերիՄակարյան

2. ՊՈԱԿ (Պետական ոչ առևտրային կազմակերպություն) –Իշխանասարի հիմնական դպրոց

3.ԱՌԱՐԿԱ՝Աշխարհագրություն

4. ԴԱՍԱՐԱՆ 7 -րդ

5. Ամսաթիվ 21.11.2023թ.

6. Ժամ / տևողություն - 45 րոպե

7. Դասի նպատակ

- Սովորողների մեջ ձևավորել գիտելիքներ կլիմա հասկացության վերաբերյալ,
- Բնակավայրի կլիմայաստեղծ գործոնները և կլիմայի սեզոնային փոփոխությունների վերլուծություն:
- Աշխարհագրական տարբեր լայնություններում օդի ջերմաստիճանների տարբերության գլխավոր պատճառների մեկնաբանություն:
- Տարվա ընթացքում Արեգակի ճառագայթների անկման անկյան փոփոխության բացատրություն:

8. Վերջնարդյունքները

Արդյունքում սովորողը պետք է կարողանա.

- Բնորոշի կլիմա հասկացությունը, բացատրել կլիմաստեղծ գործոնները:
- Բացատրե/ իր բնակավայրի կլիմաստեղծ գործոնները և կլիմայի սեզոնային փոփոխությունները:
- Բացատրել աշխարհագրական տարբեր լայնություններում օդի ջերմաստիճանների տարբերության գլխավոր պատճառը:
- Բացատրել տարվա ընթացքում Արեգակի ճառագայթների անկման անկյան փոփոխությունը:

Օրինակներով բացատրել կլիմայի ազդեցությունը մարդու առօրյա գործունեության վրա:

9. Անհրաժեշտ նյութերը, պարագաներ

Դասագիրք, կպչուն թղթեր, դասագիրք, համակարգիչ, կլիմայական քարտեզներ, կերպար

գործնականաշխատանքիկատարմանարդյունավետություն,ինքնուրույնաշխատանքիգնահատում:

10.Դասիբանալիհասկացությունները, անվանումներ, սահմանումները, որոնքաշակերտըպետքէսովորի:

11. Գնատահում

Ի՞նչէանհրաժեշտդասիհամար՝դիդակտիկպարագաներդասիամենփուլիհամար:

Ի՞նչկարևորհասկացություններ, սահմանումներ, անվանումներկան:

12. Դասիսկիզբ - 5 րոպե

Այսհատվածումբացատրումենք «ինչու» կարևորդրույթըևինչպեսէայնկապվումձերմեծնպատակիհետ:

Ուսուցչիեւաշակերտներիգործողությունները:

Դասիսկզբիհամարկիրառել<<Գուշակություն>>մեթոդը:

- թեմայիվերնագիրըևգաղափարըբովանդակողնախադասությունգրել
- նախադասությունըբաժանել 4 մասի
- նախադասությանմասերըթաքցնելդասասենյակիտարբերհատվածներում
- աշակերտներինևսբաժանել 4 խմբի
- հրահանգելգտնելնախադասությանմասերը
- համադրելևստանալդասանյութիգաղափարնուվերնագիրնամփոփողմիտքը:

Հրահանգներ

1.Հաշվել 1-4 ընհամապատասխանաբարբաժանվել 4 խմբերի:

2.Գտնելդասարանումթաքնվածհուշումները:

3.Համադրելխմբերիգտածհուշումները՝ստանալովդասիգլխավորգաղափարը:

4.Աշխատանքիկատարմանհամարունենք 5 րոպեժամանակ:

13. Նորնյութիներկայացում 10 րոպե

Բերեքօրինակներ

Ուսուցչիեւաշակերտներիգործողությունները:

Նորնյութըներկայացվումէ<<դասախոսություն>>մեթոդով:

Նորնյութիհաղորդմանժամանակաշակերտներըլսումենուսուցչիհրահանգները՝ներկայացմանժամանակմասնակցելովդասիընթացքին:

Դասախոսությունը սկսվում է առաջադրանքի կատարմամբ։ Աշակերտները գրատախտակին փակցված բառերը խմբավորում են՝ համապատասխանեցնելով կլիմային։

Ընկալման ստուգման հարցեր։

1. Ի՞նչ գիտենք կլիմայի մասին։
2.Ձեր կարծիքով ինչի՞արդյունքում է երկրի մակերևույթը տաքանում անհավասարաչափ։
3. Ի՞նչ ազդեցություն ունի կլիման մարդու առօրյա գործունեության վրա։
4. Ի՞նչ է սեզոնայնությունը։

14. Գործնական/Ուղղորդված աշխատանք 15

Գործնական աշխատանքի կատարման համար հատկացված է 15 րոպե ժամանակ։

- Ուսուցիչը աշակերտներին բաժանում է 3 խմբի
- Տալիս է գործնական աշխատանքի կատարման վերաբերյալ հրահանգներ։

1.Յուրաքանչյուր խմբի հատկացված է մեկ կլիմայական գոտի։

2. Ընթերցում ենք հատվածները՝ դասավորելով անհրաժեշտ հերթականությամբ։

3. Աշխատանքի կատարման համար ունենք 10 րոպե ժամանակ։

15. Ինքնուրույն աշխատանք - 10 րոպե

Առաջադրանքի հրահանգը, ուսուցչի և աշակերտների գործողությունները, աշակերտների վարքային ակնկալիքները։

- ուսուցիչն աշակերտներին բաժանում է թղթեր։
- Հանձնարարում է կլիմայաստեղծ գործոնների համար մտածել այլ վերջաբան։
- աշխատանքի համար հատկացված է 10 րոպե ժամանակ։
- ավարտ հրահանգից հետո հավաքում ենք թղթերը։

Ուսուցիչը կատարում է հրահանգների ընկալման ստուգում։

16. Դասի ամփոփում - 5 րոպե

Իրականացնել քննարկում սովորածի կարևորության և հետագա կիրառելիության մասին։

Բացատրել տնային հանձնարարությունը և հաջորդ քայլերը։

- Ուսուցիչն աշակերտներին հանձնարարում է մտածել այնպիսի հարց, որի պատասխանը չի հնչել դասաժամի ընթացքում։
- հարցերը գրի են առնվում թղթերի վրա
- փակցվում հատկացված վայրում
- գրված հարցերին անդրադարձ է կատարվում հաջորդ դասի ընթացքում։

Դասի պլան 2

Թեմա՝ <<Երկրի մակերևույթի ձևավորումը։ Համաշխարհային օվկիանոսի աշխարհագրական առանձնահատկությունները>>

1. ՈՒՍՈՒՑԻՉ՝ Մերի Մակարյան

2. ՊՈԱԿ (Պետական ոչ առևտրային կազմակերպություն) -Իշխանասարի հիմնական դպրոց

3.ԱՌԱՐԿԱ՝Աշխարհագրություն

4. ԴԱՍԱՐԱՆ 7 -րդ

5. Ամսաթիվ01.11.2023 թ

6. Ժամ / տևողություն - 45 րոպե

7. Դասի նպատակ

Սովորողների մեջ ձևավորել գիտելիքներ

- Աշխարհագրական թաղանթի, կառուցվածքի, հատկանիշների
- երկրակեղևի կառուցվածքի , սալերի և դրանց շարժման
- երկրագնդի խոշոր պլատֆորմների և գեոսինկլինալային շրջանների
- մայրցամաքների և օվկիանոսների
- համաշխարհային օվկիանոսի հատակ ռելիեֆի
- համաշխարհային օվկիանոսի ջրի ջերմության ու աղիության

մակընթացության և տեղատվության վերաբերյալ։

Ի՞նչ կկարողանան անել աշակերտները դասի ավարտին։

Հիշե՛ք Բլում-Անդերսոնի աստիճանակարգը։

Ուսուցչի կարողունակությունների հայեցակարգ

Սովորողի կարողունակությունների հայեցակարգ

Սովորողի հմտություններ՝

- ռեսուրսների կենտրոնացում
- պատասխանատվության բաշխում

Ուսուցչի հմտություններ՝

- բաց լինել հետադարձ կապի համար
- ակադեմիական առաջընթացի դիտարկում

8. Վերջնարդյունքները

Արդյունքում սովորողը պետք է կարողանա.
Ներկայացնի
1 .Աշխարհագրական թաղանթի , կառուցվածքի , հատկանիշները
2. Բնորոշի երկրաբանական տարբեր դարաշրջաններում երկրագնդի զարգացման գլխավոր գործընթացները
3. Բացատրի պլատֆորմների առաջացումը և գեոսինկլինալների զարգացման փուլերը
4. Թվարկի երկրաբանական վաղ անցյալի գերմայրցամաքները , առանձնացնել ժամանակակից մայրցամաքներն ու օվկիանոսները
5. Կարողանա մայրցամաքների ուրվագծերի համադրմամբ վերլուծի երկրաբանական անցյալում գոյություն ունեցած միասնական մայրցամաքի պատկերը
6. Ներկայացնի Համաշխարհային օվկիանոսի հատակի ռելիեֆը
7. Բացատրի Համաշխարհային օվկիանոսի ջրի ջերմության և աղիության փոփոխության օրինաչափությունները
8. Բացատրի մակընթացության և տեղատվության երևույթը
9. Ներկայացնի տարբեր օվկիանոսներում տաք և սառը հոսանքները

9. Անհրաժեշտ նյութերը, պարագաներ

Դասագիրք,համակարգիչ, պրոյեկտոր, քարտեր , գործնական աշխատանք , ինքնուրույն աշխատանք, ընկալման ստուգման հարցեր:

10. Դասի բանալի հասկացությունները, անվանումներ, սահմանումները, որոնք աշակերտը պետք է սովորի

11. Գնատահում

12. Դասի սկիզբ - 5 րոպե

Ուսուցչի եւ աշակերտների գործողությունները:

<<Արա հիմա>>

- աշակերտներին հատկացնել կպչուն թերթեր, որոնց վրա գրված կլինի մեկ բառ
- հրահանգել գրել գրված բառի համարժեքը
- թերթիկները փակցնել նախատեսված վայրում
- քննարկման միջոցով ընդհանրացնել թեմայի վերնագիրը:

Հրահանգներ

- Գրել նշված բառերի որտեղ գտնվելը
- Ամրացնել գրատախտակին
- Աշխատանքի կատարման համար ունենք 5 րոպե ժամանակ
- Փորձենք միասին կատարել ընդհանրացում և հասկանանք՝ ուսումնասիրվող դասի վերնագիրը:

13. Նոր նյութի ներկայացում - 15րոպե

Ուսուցչի եւ աշակերտների գործողությունները:

Դասախոսություն

Սահիկաշարի միջոցով ներկայացնել նոր նյութը:

Ընկալման ստուգման հարցեր

- Ինչ է աշխարհագրական թաղանթը, կառուցվածքը , հատկանիշները
- Որն է երկրակեղևի կառուցվածքը
- Որոնք են երկրագնդի խոշոր պլատֆորմների և գեոսինկլինալային շրջանները
- Որոնք են մայրցամաքներն և օվկիանոսները:

14. Գործնական/Ուղղորդված աշխատանք 15 րոպե

Ուսուցչի եւ աշակերտների գործողությունները, աշակերտների վարքային ակնկալիքները:

- 1-3 հաշվով դասարանը բաժանել երեք խմբի
- Յուրաքանչյուր խմբի հատկացնել մեկ մայրցամաք
- հրահանգել գտնել և գրել դրանց տարբերակը
- ներկայացնել կատարած աշխատանքը՝ նշելով ամենից հետաքրքիր մայրցամաքը:

15. Ինքնուրույն աշխատանք/

5 րոպեի ընթացքում շարադրել դասի ընթացքում սովորածը

- Աշակերտներին բաժանել թղթեր
- հատկացնել 5 րոպե ժամանակ՝ օրվա դասի սովորածը շարադրելու համար

16. Դասի ամփոփում:

Ամփոփել դասի նպատակը, կարևոր դրույթները:

Իրականացնել քննարկում սովորածի կարևորության և հետագա կիրառելիության մասին:

Բացատրել տնային հանձնարարությունը և հաջորդ քայլերը:Կիրառել անավարտ նախադասությունների մեթոդը.

- ինձ հետաքրքրեց….
- Այս դասից ավելին կսովորեի , եթե….
- Հաջորդ դասին կուզեի խոսել…

Եզրակացություն

Յուրաքանչյուր մարդ կյանքում ունի իր առաքելությունը: Մենք ծնվել ենք այս աշխարհում մեր ներդրումն ունենալու և ինչ–որ բան փոխելու համար, ուստի եթե ուզում ենք դրական փոփոխություն բերել մեր հասարակություն, կապ չունի, թե ինչ մասնագիտություն ունենք, պետք է մեր աշխատանքը պատվով և ազնվությամբ կատարենք: Մեր կատարած աշխատանքի որակից է կախված մեր պետության բարօրությունն ու առաջընթացը, ծաղկումն ու զարգացումը: Աշխատանքը լավ կատարելու համար պետք է սիրենք այն: Հարկ է մեջբերել Սթիվ Ջոբսի խոսքերը՝ <<Ձեր աշխատանքը ձեզնից չափազանց շատ ժամանակ է տանելու, և միակ միջոցը կյանքից բավարարված լինելու՝ սիրած գործով զբաղվելն է: Դուք պետք է սիրեք ձեր աշխատանքը: Եթե այդպիսի աշխատանք դեռ չեք գտել, շարունակեք որոնումները: Մի՛ հանձնվեք: Երբ գտնեք այն, անմիջապես կհասկանաք, որ դա հենց այն է, ինչ փնտրում էիք: Եվ ինչպես դա լինում է ճիշտ հարաբերությունների պարագայում, ձեր սերն ու կիրքը ձեր աշխատանքի հանդեպ տարիների հետ միայն կմեծանա>>:

Այո՛, մեր աշխատանքը մեզնից շատ ժամանակ է տանում, իսկ կյանքում ամենից թանկը ժամանակն է, ուստի մեր վատնած ժամանակը նպատակին ծառայելու

համար հարկ է ջանքեր չխնայել, գործի դնել ուժ և ճիգ՝ նախապես սահմանված նպատակներին հասնելու համար։ Եթե դու չես պլանավորում քո անելիքները , ապա դու պլանավորում ես քո անհաջողությունները։

Փորձարարական դասերը, որոնք իրականացրել ենք նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, փաստեցին վերևում ընդգծված մտքի ճշմարտացի լինելը։ Ուղիղ հրահանգումով կազմված դասի պլաններով ուսումնական գործընթացը կազմակերպելիս եկանք այն եզրակացության, որ նախապես պլանավորված դասերը որակապես ավելի լավն են։ Դասի յուրաքնաչյուր փուլում գործածվող մեթոդները, չնայած երկուսից ավել լինելուն, չէին խանգարում դասի բնականոն ընթացքին, այլ, ընդհակառակը, դասը դարձնում էին ավելի հետաքրքիր։ Մեթոդների կիրառման շնորհիվ դասարանում մեծանում էր աշակերտների ներգրավվածության մակարդակը, հետաքրքրությունը դասի , ուսումնական նյութի վերաբերյալ։ Սա երևի թե հակասում է այն թյուր կարծիքին, որ մեթոդներով հագեցված դասը չի կարող արդյունավետ լինել։Ուղիղ հրահանգումով կազմակերպված դասերի ընթացքում նոր նյութի ընկալման ստուգման տարբեր մեթոդներ ու հնարներ կիրառելով՝ եկանք այն եզրակացության, որ հաղորդված նյութը իր ամբողջ չափաբաժնով ընկալելի և կիրառելի է դասարանի յուրաքանչյուր աշակերտի համար՝ անկախ մակարդակների տարբերությունից։

Գրականության ցանկ

- Ռ.Ստեփանյան, Կ.Չիբուխչյան, Ա. Բալայան Ուսուցչի ձեռնարկ
- Ն.Տողանյան,Թ. Թովմասյան, Լ. Գրիգորյան Մեթոդական ձեռնարկ ավագ դպրոցի ուսուցչի համար
- Հասմիկ Այվազյան Դասի կառուցվածքային տարրերի կիրառումը հանրակրթական առարկաների օրվա պլանների կազմման գործընթացում
- Ուսուցման արդյունավետ հնարներ
- <<Դասվանդի՛ր Հայաստան>> հիմնադրամ սահիկաշար
- Особенность видов обучения в педагогике
- Характеристика метода прямого обучения